ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

Հովիկ Հովհաննիսյանից

ՀՀ Կոտայքի մարզ, գ. Առինջ, 2210,
Հեռ. բջջ. (+374 91) 20 02 77; 93 20 02 77
E-mail: noratunk@ yandex.ru

"Հայկական պտղատնկարանների ասոցիացիա"
գյուղատնտեսական հասարակական կազմակերպություն
N 03Ա218727

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ "Հայկական պտղատնկարանների ասոցիացիա" գյուղատնտեսական հասարակական կազմակերպությունը ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

1. "Տնկարանային տնտեսությունների ասոցիացիա" ՀԿ-ի կանոնադրության պետական գրանցման համարը
2. Տնկարանային տնտեսությունների ասոցիացիա" ՀԿ-ի լիազորված անձի անձնագրի պատճենը,
3. Ամփոփ տեղեկանք վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ
4. Հետաքրքվածության նամակ
5. Հակիրճ վերլուծություն վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Դիմող՝

"Հայկական պտղատնկարանների ասոցիացիա"
գյուղատնտեսական ՀԿ-ի նախագահ Հովիկ Հովհաննիսյան

<02>__մայիսի__ 2016 թ.

ՀՀ Գյուղ. Նախ.
Վարչատնտեսական վարչություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
«03» 05 2016 թ.
Մուտք N Դ/5119-16

Ամփոփ տեղեկանք վերջին երկու տարում ծավալած գործունեության վերաբերյալ

2012 թվականի հիմնադրված "Հայկական պտղատնկարանների ասոցիացիա" գյուղատնտեսական հասարակական կազմակերպությունը վերջին երկու տարում ծավալել է գործունեություն Հայաստանում այգեգործության զարգացման և պտղատնկարանների ստեղծման ուղղությամբ:

Հայաստանում այգեգործության արագ զարգացումը հնարավոր է ապահովել ինտենսիվ այգիների հիմնման միջոցով: Կարճ ժամանակում բարձր բերքատվության և որակյալ բերք ունենալու հասնելու համար արդեն իսկ հրամայական պահանջ է ինտենսիվ այգեգործության ներդրումը: Նոր այգիները պետք է հիմնվեն բացառապես ինտենսիվ եղանակով: Պտղատու այգին պետք է համապատասխանի մի շարք պահանջների՝ նախ սորտային կազմի ճիշտ ընտրություն, փոշոտիչ սորտի ճիշտ դասավորվածություն, այն պետք է հիմնված լինի մաքրասորտ և նույն տարիքի տնկանյութով՝ սորտին և մշակության ձևին համապատասխան տնկման սխեմայով՝ հաշվի առնելով կիրառվելիք ագրոտեխնիկան:

"Հայկական պտղատնկարանների ասոցիացիա" գյուղատնտեսական հասարակական կազմակերպությունը ծավալել է իր գործունեությունը ելնելով վերոնշված մոտեցումներից, մասնավորապես.

- Խորհրդատվական ծառայություններ են տրամադրել գյուղացիական տնտեսություններին՝ ժամանակից պտղատու այգիների հիմնման, ճիշտ պտղատեսակների և սորտերի ընտրության, տնկումների համար հողերի նախապատրաստման, ինչպես նաև այգիների խնամքի վերաբերյալ:

- Արտերկրի տնկարանային տնտեսություններից և գիտահետազոտական ինստիտուտներից Ասոցիացիայի նախաձեռնությամբ հրավիրվել են մասնագետներ՝ ֆերմերներին պտղատու ծառերի էտի և ձևավորման մեթոդներին ծանոթացնելու համար:

- Արտերկրից ներմուծվել են տարբեր պտղատու մշակաբույսերի՝ ծիրանենու, դեղձենու,սալորենու,տանձենու խնձորենու և այլի նոր սորտերի տնկիներ,

որոնց վերաբերյալ տարվել են ուսումնասիրություններ՝ դրանց տեղական բնակլիմայական պայմաններում հարմարվողականության աստիճանի, բերքատվության և որակի ցուցանիշների որոշման և գնահատման նպատակով: Տնկիները տրամադրվել են նաև առանձին գյուղացիական տնտեսություններին:

- Արտերկրից ներմուծվել են պատվաստակալներ՝ տեղական պայմաններում ժամանակակից ցածրաճ տնկիների աճեցումն ու բազմացումը կազմակերպելու նպատակով:

- Հիմնվել են փոքր պտղատու այգիներ առանձին գյուղացիական տնտեսություններում:

"Հայկական պտղատնկարանների ասոցիացիա"
գյուղատնտեսական ՀԿ-ի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան

Հետաքրքվածության նամակ

02 մայիս 2016

Ծանոթանալով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կայքում տեղադրված հայտարարությանը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու մասին, ցանկանում են առաջարկել իմ թեկնածությունը վերոնշյալ խորհրդի կազմում ընգրկվելու համար:

Իմ գործունեության բնույթը համընկնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործունեության ուղղություններին: Ավարտելով Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտը զբաղվել եմ գյուղատնտեսությամբ, մասնավորապես այգեգործությամբ, տնկարանային տնտեսությունների ստեղծմամբ և զարգացմամբ: Ունեմ 25 տարուց ավելի մասնագիտական փորձ: Զբաղեցրել եմ տարբեր պաշտոններ գյուղատնտեսության ոլորտի հաստատություններում, մասնակցել եմ պետական և դոնոր համայնքների կողմից ֆինանսավորվող բազմաթիվ ծրագրերում՝ տրամադրելով խորհրդատվական աջակցություն գյուղացիական տնտեսություններին: Ակտիվ համագործակցել և ներկայումս շարունակում եմ համագործակցել ոլորտին առնչվող միջազգային կազմակերպությունների, այլ երկրների գիտական հաստատությունների, տնկարանային տնտեսությունների հետ: Ունեմ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի աստիճան, 20-ից ավել հոդվածներ տպագրված Հայաստանի և արտերկրի գիտական ամսագրերում: Այգեգործների միջազգային կազմակերպության անդամ եմ:

2012 թվականին հիմնադրել եմ "Հայկական պտղատնկարանների ասոցիացիա" գյուղատնտեսական հասարակական կազմակերպություն:

Կարծում եմ իմ կրթությունը և մասնագիտական փորձը համապատասխանում է ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու պահանջներին:

Կանխավ շնորհակալ եմ իմ թեկնածությունը քննարկելու համար:

Հարգանքով,

Հովիկ Հովհաննիսյան

Հակիրճ վերլուծություն վերջին երեք տարիների ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Գյուղատնտեսությունը եղել և մնում է Հայաստանի տնտեսության առանցքային, չափազանց կարևոր ոլորտերից մեկը: Վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը իրականացնելով կառավարության քաղաքականությունը գյուղատնտեսության և անտառային տնտեսության բնագավառներում համաձայն 2010 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությամբ սահմանված գերակա ուղղությունների իրականացրել է պետական աջակցության ծրագրեր և նախաձեռնություններ գյուղական վայրերում ապրուստի միջոցների բարելավելու, պարենային ապահովության մակարդակը բարձացնելու և գյուղերի զարգացմանը նպաստելու ուղղությամբ: Արդյունքում ոլորտում արձանագրվել են դրական տեղաշարժեր, օրինակ ստեղծվում են գյուղատնտեսական կազմակերպություններ, կոոպերատիվներ և շուկայական ենթակառուցվածքներ, մատչելի գնով գյուղացիներին պարարտանյութերի և դիզելային վառելանյութի տրամադրման շնորհիվ բարձրացել է վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, ավելացել են գյուղատնտեսության արտադրության ծավալները: Բուսաբուծության ճյուղում դրական միտումներ կան հացահատիկի, բանջարեղենի արտադրության, սերմնաբուծության համակարգի զարգացման բնագավառում: Անասնաբուծության բնագավարում պետական ծրագրերի իրականացման շնորհիվ, որոնց թվում են "Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագիրը", "Տավարաբուծության զարգացման ծրագիրը" ավելացել է մսի, կաթի, ձվի արտադությունը: Նկատելի տեղաշարժ է արձանագրվել ձկնաբուծության ոլորտում: Արոտավայրի բարելավման ուղղությամբ կատարվել են արոտավայրի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներ: Դա վկայում է ՀՀ գյուղատնտեսության կողմից իրականացվող պատշաճ քաղաքանության և աշխատաքների արդյունավետ կազմակերպման մասին: Կոոպերացիայի զարգացումը, տնտեսությունների խոշորացման հետ միասին, փոքր հողակտորների հետ կապված դժվարությունների հաղթահարման ամենաարդյունավետ ուղին է և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները պետք է շարունակվեն:

Սակայն ոլորտում դեռ կան բազմաթիվ շրջակա միջավայրին, գյուղի սոցիալ-տնտեսական վիճակին առնչվող խնդիրներ, որոնք լուծում են պահանջում:

Գյուղատնտեսության ոլորտը խիստ զգայուն է կլիմայի և ջերմաստիճանի, տեղումների և արտակարգ երևույթների նկատմամբ:

Շրջակա միջավայրին առնչվող ամենալուրջ խնդիրների շարքում են՝ ոռոգման անարդյունավետության հետևանքով առաջացող ջրի կորուստը, հողի աղակալումը և էրոզիան, արդյունքում՝ մշակաբույսերի բերրիության անկումը: Նպատակահարմար է հարկավոր է այլ գերատեսչությունների հետ մշակել արդյունավետ քայլեր այս ուղղությամբ՝ տվյալ խնդիրները աստիճանաբար լուծելու նպատակով:

Հայտնի է, որ Հայաստանում գյուղատնտեսությունը համարվում է բարձր ռիսկային, ինչը պայմանավորված է հողային սահմանափակ ռեսուրսներով և հողի ոչ բավարար խոնավապահովվածությամբ:

Այսօր երկրում հողի դեգրադացման մոտավորապես 11 տոկոս է կազմում, իսկ կլիմայի փոփոխության և կլիմայական լուրջ երևույթների առաջացման (օրինակ՝ երաշտներ, ջերմային ալիքներ, ջրհեղեղներ) և տևողության ավելացումը ավելի է սպառնում գյուղատնտեսությանը: Կարկտահարությունից, գարնանային ցրտահարությունից և սելավներից վերջին տարիներին գյուղատնտեսությանը տարեկան 15-20 միլիոն ԱՄՆ դոլար գումարի վնաս է կրել: Այդ երևույթների հետևանքների մեղմման ուղղությամբ կատարվող աշխատանքների մակարդակը դեռ ցածր է:

Կլիմայի փոփոխության հետևանքով ակնկալվում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության անկում՝ հարմարվողականության միջոցառումներ չձեռնարկելու դեպքում: Ազգային քաղաքականության մակարդակում առաջարկվում են հարմարվողականության որոշակի միջոցառումներ, այդ թվում՝ երաշտադիմացկուն սորտերի, հատկապես՝ տեղական սորտերի հետազոտում և օգտագործում,սելեկցիա բարձրլեռնային արոտավայրերի առավել լայն օգտագործման և տեսակարար բեռնվածության կրճատում, խոնավության պահպանման և ջրախնայողական ոռոգման տեխնոլոգիաների կիրառում, մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների նկատմամբ կայուն սորտերի օգտագործում, կարկտապաշտպան տեխնոլոգիաների կիրառում, և այլն: Դեռևս այդպիսի միջոցառումները, տնտեսական և սոցիալական մի շարք գործոններով պայմանավորված սահմանափակումների հետևանքով, լայն կիրառում չեն գտել, չի սահմանվել դրանց առաջնահերթությունն ըստ արդյունք-ծախսերի կամ իրագործելիության չափանիշների և հետևաբար, դրանք ընդունման ենթակա պարտադիր առաջարկություններ չեն: Ուստի հարմարվողականության

այնպիսի ռազմավարություն է հարկավոր մշակել, իրականացումը լինի տեղին, հասցեական և արդյունավետ:

Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալները մեծացնելու ուղղության ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի այգեգործության զարգացմանը: Տարբեր բարձրություններում բնակլիմայական պայմանների առանձնահատկությունների շնորհիվ Հայաստանի բնությունը պարգևում է մրգերի ու հատապտուղների առանձնահատուկ համային հատկանիշներ ունեցող տեսակներ:

Նոր սորտերի ստացումը և դրսից լավագույն ժամանակակից սորտերի ներմուծումը կնպաստի ինտենսիվ պտղատու այգիների ընդարձակմանը, աշխարհագրության ընդլայնմանը և ի վերջո տեղական և արտաքին շուկաներ թարմ մրգերի երկարաժամկետ մատակարարմանը: Միավոր տարածությունից ստացվող եկամուտը բարձրացնելու համար անհրաժեշտ է այգեգործության բնագավառում կիռարել նոր տեխնոլոգիաներ, իսկ դրա համար մշակել պետական աջակցության մոտեցումներ, սուբսիդավորման ծրագրեր՝ այգեգործությամբ զբաղվող գյուղացուն աջակցելու և ոլորտը զարգացնելու նպատակով:

Վարելահողերը նպատակային չօգտագործելը պայմանավորված է գյուղացիների ֆինանսական միջոցների սղությամբ, արտադրության ցածր եկամտաբերությամբ, վարկերի ձեռքբերման դժվարամատչելիությամբ: Էական են նաև մեքենայական աշխատանքների դժվարամատչելիությունը, հողակտորների մասնատվածությունը, ոռոգման ջրի բարձր սակագինը: Այս խնդիրների լուծման գործում կարևորվում է նպատակային սուբսիդավորման ծրագրերի իրականացումը, լիզինգային ծրագրերի միջոցով տեխնիկայի մատակարարման մեխանիզմների կիրառումը:

Գյուղատնտեսության ոլորտի ռիսկերի մեղմման գործընթացում կարևորվում է ապահովագրական համակարգի աստիճանական ներդրումը: Դա կնպատի գյուղատնտեսությամբ զբաղվելու ցանկության աճին և գյուղական համայնքներից դեպի քաղաք մարդկանց հոսքը կրճատմանը:

Իրավաբանական անձի պետական գրանցման

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա218727

Իրավաբանական անձի անվանումը

«ՀԱՅԿԱԿԱՆ ՊՏՂԱՏՆԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գրանցված է Պետական ռեգիստրի
Կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման համարը **211.171.68727**
Գրանցման ամսաթիվը **2012-02-13**
Իրավաբանական անձի ծածկագիր(կոդը) **41561490**
Հարկ վճարողի հաշվառման համար **03536959**
Իրավաբանական անձի տեսակը **ոչ առևտրային**
Գործունեության ժամկետը **անժամկետ**

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"13" 02 2012 թ.

Կ.Տ.

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ միասին

ՆԵՐԴԻՐ 001

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա218727 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **«ՀԱՅԿԱԿԱՆ ՊՏՂԱՏՆԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Գտնվելու վայրը / **գ. Առինջ 2210 Կոտայքի մարզ, Հայաստան**

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար,
Նախագահ՝ Հովիկ Հովհաննիսյան
անձնագիր **AH0200483**, տրվ. **2006-05-20, 019** կողմից,
հասցե / **գ. Առինջ 2210 Կոտայքի մարզ, Հայաստան**

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը —

Այլ տեղեկություններ —

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

Կ.Տ.

"13" 02 2012 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին